

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/5

20 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 20.12.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 12.12.2014 թ-ի թիվ 029058 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 17.11.2014 թ-ին կազմվել է ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ թիվ 6105048 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով արձանագրվել է «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստ (թվով 10 աշխատակից): Արդյունքում Ակտով կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 6.000.000 դրամ:

Ընկերության կողմից Ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով, որի հետևանքով ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովի 23.12.2014 թ-ի թիվ 34/4 որոշմամբ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 05.12.2014 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճվել է:

Իր հերթին, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի դրույթներով ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 10.12.2014 թ-ին հրապարակվել է թիվ ԱՀ 029058 հանձնարարագիրը՝ ընկերությանը պատկանող գույքի վրա չկատարված պարտավորությունների չափով արգելանք դնելու մասին: Արդյունքում 12.12.2014 թ-ին ընդունվել է ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ թիվ 029058 որոշումը, որով արգելանք է դրվել ընկերությանը պատկանող գույքի, բանկային հաշիվների և դրամարկղային գրքի վրա՝ գումարով 6.122.990 դրամի չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 12.12.2014 թ-ի թիվ 029058 որոշմամբ արգելանք դրված գումարի հիմնական մասը կազմում են ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6105048 ակտով առաջադրված պարտավորությունները, որը վիճարկվում է դատական կարգով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև վարչական դատավարության կարգով Ակտի վերաբերյալ որոշում՝ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 20.12.2014 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՍՅԱՆ